ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նոր ծրագիր՝ իրավագիտության մագիստրոսի գիտական աստիճան

Հայաստանի ամերիկյան համալսարանն սկսում է փաստաթղթերի ընդունումը մագիստրոսի կոչում շնորհող երկամյա նոր ծրագրի՝ համեմատական և միջազգային իրավագիտության համար, որը կսկսվի 1997 թ. մարտին:

Ծրագիրը կունենա երկու ուղղվածություն և համեմատական սկզբունքով կուսումնասիրի եվրոպական քաղաքացիական իրավունքի և անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները: Համեմատական սահմանադրական իրավունքի առարկաները կընդգրկեն սահմանադրականության, իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության և անհատի իրավունքների հիմնահարցերը, ինչպես նաև միջազգային համաձայնագրերին և պայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը: Միջազգային գործարարության իրավունքի շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանրային իրավունքի և միջազգային գործարքների հիմնական դրույթները: Կուսումնասիրվեն նաև պայմանագրային հարաբերությունները, միջազգային ապրանքային առևտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը և վեճերի լուծման մեթոդները:

Դիմորդները պետք է ունենան իրավաբանական բարձրագույն կրթություն և անգլերեն լեզվի լավ իմացություն:
Դիմորդները պետք է ներկայացնեն՝
1. Դիպլոմի և ներդիրի բնագիր օրինակներ՝ իրենց պատճեններով,
2. Երեք երաշխավորագիր-նամակ,
3. Տեղում լրացնեն դիմում և ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման կանխավճարը կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք դրամ, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը 1996թ. հուլիսի 8-ն է:

Բոլոր դիմորդները 1996թ. հուլիսի 11-ին կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 և ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1996թ. սեպտեմբերից մինչև 1997թ. փետրվարի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի արագացված ծրագրին: Անգլերեն լեզվի արագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 180 դոլարին համարժեք դրամ: Նախքան ծրագիր ընդունվելը՝ 1996 թ. հուլիսի վերջին, որոշ դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմորդների անուններն ու հարցազրույցների ամսաթվերը կփակցվեն անգլերեն լեզվի քննությունից հետո:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի, նախապատրաստական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության և LSAT քննության արդյունքների հիման վրա: Հիմնական ծրագիրը կսկսվի 1997 թ. մարտին՝ անգլերեն լեզվի արագացված ծրագրի ավարտից հետո: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու և աշխատելու պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս՝ 58-81-15, 27-16-29:

ՀԱՀ-ը բացառում է ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականությունը